

Հուզովիկոս թագաւորը Կ. Պոլսի Պաղտին Բ. թագաւորէն ստացած է փոխարէն մեծ զուճարի մը՝ զոր փոխ առած էր Վենետիկցիներէն (Mis. հատ. II. էջ 275)։

Ուրիշ հեղինակ մը կը կարծէ թէ փշեայ պսակը շինուած է Zizyphus spina christi կոչուած փուշէն, որուն սրածայր փուշերովը հիւսուեցաւ Տիրոջը փշեայ պսակը (Bar. gd. էջ 271)։

Բանաստեղծներ ալ յաճախ ականարկութիւններ կ'ընեն փշեայ պսակի մասին, իբր թէ մեր Տիրոջ աբիւնէն՝ որ խաչին ստորոտը կը վազէր՝ պատահաբար կարմիր վարդեր յառաջ կուգային։ Կը պատմուի նաև թէ փշեայ պսակը կազմուած է սրափուշէ՝ երբ բոլորովին ծաղկած էին, եւ թէ այդ ծաղիկները որ կը ծածկէին այդ սուր փուշերը կարմիր ներկուած էին, «Մարգրիկ Յիսուսի ճակտին վրայ փուշեր կը տեսնէին, իսկ հրեշտակները վարդեր» (L. V. C. էջ 182-183)։

Թ. ԳՈՂԳՈԹԱ

Փուշ պսակի մատուռէն քառասուն ոտնաչափ հեռի է Գողգոթան, որ շատ կանուխէն բացօթեայ ժայռ մ'էր, և շրջապատուած էր արծաթեայ վանդակով մը, յատակի հողը ծածկուած էր մողայիքներով և ժայռին կեդրոնը տնկուած էր ոսկւով և թանկագին քարերով զարդարուած մեծ խաչ մը։ Ե. դարուն Գողգոթայի

որ Մեծն Կարոյսի տուած է Ս. Պսակի փուշերէն։ Հրաւեր այլուր գեղեցիացուցած է։ «Փուշ պսակը, կ'րտէ, սկսած է ծաղկիլ, եւ շատուակ կը ծաղկէին՝ երբ եպիսկոպոսը իր սկրասով կը կտրէ ծաղիկները։ Այս հրաւեր կը յիշէ Գրիգոր եպս. Տուրացին ալ։ Իւ նոյն իսկ ուրիշ աղբիւրի մը համաձայն, այս հրաւեր կը կրկնուէր ամէն տարի Աւագ Ուրբաթի օրը» (E. F. B. էջ 121-122)։